Նալբանդյանի „Ну хорошо" վեպակավորի մասին առաջին և միակ ազգաբարեբությունը տվել է ժամանակին նոր-պարսկական դրականագետ Մ. Բերբերյանը, էթժ. Մուլքանշահի ինձ հանձնած թղթերի մեջ, — գրել է 1902 թ. Բերբերյանը, — կա մի վեպակավոր, որը գրի չի առել Միք. Նալբանդյանը 1856 թե 1857 թ.թ., այնինքն յուր նոր Մոսկվա կեցած տարին։ Դա մի ահագին վեպակավոր է „Ну хорошо" վերնագրով, բավականին քուչլ, համեմած բազմաթիվ ուսանքներն նախատաստեբյուններով, բառախաղերով և այլն։ Հանգուցյալ բժշկի ինձ գրած նամակից կերևում է, որ այդ վեպակավորի մեջ խոսվում է Արտեմի Մակարիչ Ճեպուլովի, Լապտյանների հին բարեկամի, նախկին ազայի և այն ժամանակի ճեմարանի տեսուչի մասին, որը Մոսկվայի հայոց կեղեցիների կերեցփոխն էր և հայտնի յեր իբրև բռնակալ անձն։ Վեպակավորի մեջ դուրս բերված մյուս անձն է հանգուցյալ Հարությունն Կեռքչեանցը։ „Молодой человек"-ը ինքը Նալբանդյանն է և այլն։ Բերբերյանը հայտնում է այնուհետև, որ վեպակավորը գրված է անդյուրընթեռնելի ձեռքով, քուղքը, որի վրա գրված է այդ, մաշվել է և պատռտվել, բայց ցավալի վոչինչ չկա այդ տրիքով, քանի որ գրվածքը ավել գեղարվեստական նշանակություն ունի, վոչ թե կենսագրական։ Ուստի և տպելով միայն, վեպակավորի առաջին ութ տողը, Բերբերյանը վերջակետ է դնում, հարելով թե՝ ամբողջ վեպակավորը այստեղ մեզ համար անհասկանալի և մինչև իսկ անկապ տողերից և կազմված, մինչդեռ հեղինակի մոտ ընկերները բերան էլին ածել այդ „Ну хорошо"-ն և յերևի տարաճում էլին բերնեբերան՝ ազդանշանին նեղացնելու մտքով։ Այս վեպակավորը միանգամ ևս ցույց է տալիս, որ Նալբանդյանը տավտուբյուն ուներ ընկնելու սրա նրա հետ և յուր սուր լեզվով սաստիկ հարվածներ տալու հակառակորդներին։ Եվ այդ սուր լեզվի և գրչի պատճառովը եր, որ Մ. Նալբանդյանցի քշնամիներն անպակաս էլին»*,

* «Լումա», 1902, № 2, յեր. 163 և հետ.

Բերբերյանի այս տեղեկանքից կարելի չէ հանել նախ այն եզրակացությունը, որ Նա չի հասկացել վոտանավորի միտքն ու արժեքը։ Վոտանավորը գրված է չեղել նրան բանհասկանալի ձեռքով և կազմված նույնչափ բանհասկանալի և միևնույն խոկ անկապ տողերից։ Հնհասկանալին մասերն խոկ քողել են նրա վրա ազդարվեստականը կամ էկենագրականը արժեքից զուրկ գործի տպավորությունն։ Բերբերյանը չի ընդունում, քան չերևույթին, որ բազանների նեզացնելուց միտումով գրված վորևե գործ կարող և ունենալ առհասարակ ազդարվեստական արժեք։ Նա չի նկատել, որ սուբ ու զվարթ այդ տողերը կապված են անբաժան Նալբանդյանի հասարակական-քաղաքական կենագրության հետ։ Չի նկատել անգամ, որ անգամ գրական տեսակետից այդ վոտանավորն ավելի արժեքավոր է, քան Նալբանդյանի նախահյուսիսափայլյան վորևե այլ ազդարվեստական գրվածքը...

Անհրաժեշտ է ստուգել նախ վոտանավորի գրության ժամանակը։ Բերբերյանի ասելով այն գրվել է 1856 կամ 1857 թվին, այսինքն, — ավելացնում է Նա, հեղինակի ընդ Մոսկվա չեկած տարին։ Հայտնի չե սակայն, որ Նալբանդյանի ընդ Մոսկվա չեկած տարին 1856—57 թվականը չեր, այլ 1853—54 թվականը։ Պետք է, ուրեմն, ընտրություն կատարել 56—57 և 53—54 թվականների մեջ։ Համեմատելով վոտանավորը հեղինակի մինչև 1855 թվականները գրած վոտանավորների հետ, այնի չի ընկնում „Ну хорошо"-չի ժանրային և լեզվական առանձնահատկությունը։ Ավելի ևս առանձնահատուկ է վոտանավորի բովանդակությունը, որ հիշեցնում է մեզ ավելի շուտ հեղինակի առեղծագործության էհյուսիսափայլյանա շրջանը, քան 53—54 թվականը։ Նալբանդյանի ընդ Մոսկվա չեկածա տարվա, այսինքն՝ 53—54 թվականի հետ կապված է միայն վոտանավորի ոյուքը, նրա այուժեն։ Բայց այդ և հենց, որ չի նկատել բնավ վոտանավորի էկենագրական արժեքը ժխտող քննադատ՝ Մ. Բերբերյանը։

Դասական չկա, որ „Ну хорошо"-ն կապված է Ներսես Աշտարակեցու և նրա արբանյակների կազմակերպած այն հալածանքների հետ, որոնց չենթարկվել եր Նալբանդյանը — վոտանավորի „молодой человек"-ը — հատկապես հենց 1853—54 տարում։

Ներսեսի և յուրայիններին Նալբանդյանի դեմ հանած հալածանքների պատմությունը հայտնի չե բավականաչափ։ Հալածանքների առիթը կաթողիկոսի ձեռքն ընկած մասնավոր այն նամակներն եյին, որ գրել եր վերջինս տակավին 1846 թվին,— այն ժամանակ դպիր Մկրտչյան Ալստայան — և որոնց մեջ հանդգ-

Նրել եր քննադատելու նոր Նախիջևանի ազատներին և սրանց հետ մեկտեղ նաև իրեն՝ Ներսեսին։ Իր նամակում նալբանդյանը ծաղրել եր սրանց այն քանի համար, վոր հեռացրել եյին քաղաքից իր մեծարած ուսուցիչ Գաբրիել Պատկանյան քահանային՝ նշանակելով նրա տեղ աննշան պատրաստություն ունեցող Մկրտիչ Ենկենյանին։ Վերջինիս դասերի հաճախումը պարտադիր եյին հայտարարված քաղաքի տիրացուներին համար, քանի վոր, ինչպես պրում եր Ներսեսը, տառապ վկայականի նորա վրան քննիչներացանուքիանց և վրան վարուց և քարուց արժանավորուքիանցն չկարացին մտանել ի կարգ հոգևորականուքիանց*։ Պատկանյանին հեռացնելու պատճառը նրա քշնամական տրամադրուքյունն եր դեպի քաղաքագլուխ Հարուքյունն ազա Մալիքովը ու նրան հովանավորող Ներսեսը, վոր յեկեղեցական գործերի բաքտատակալ կամ էքզեկուտակալ եր նշանակել նրան։ Պատկանյանի և Մալիքովի գժտուքյան ատիքը քիմի յեկեղեցական այն հատուկքներն եյին, վոր, Նախիջևանի և Բեսարաբիայի առաջնորդ (հետագայում կաթողիկոս) Ներսես Աշտարակեցուց ստացած լիազորուքյամբ, 1842 քվից հավաքում, շահեցնում և ինքնագլուխ ծախսում եր Մալիքովը, պատասխանատու համարելով իրեն միայն Ներսեսի առաջ։ 1845 քվին, կաթողիկոսանալու համար մեկնելով Էջմիածին, Ներսեսը, ինչպես պատմում և ետո ազգս հայոցք սրած մի ազդարարուքյան մեջ, ինքը Մալիքովը հանձնարարում եր սրան նաև ժամին ցգալ նորոյ վիճակաւոր առաջնորդին ունել իշխանուքիւն քէ ի վերայ հոգևոր կառավարուքեանն և քէ ի վերայ երէցփոխանաց եկեղեցացն Նախիջևանի, հակելով ի վերայ հաշուոց եկից և մտից եկեղեցական գրամոցն**։ Միացնելով իր ձեռքում քաղաքացիական և յեկեղեցական գործերի դեկը՝ Մալիքովը առաջ եր քաշում ամենուրեք ազգայական գործի շահը և միաժամանակ էշահեցնում անկոնտրոլ յեկեղեցական փողերը։ Պատկանյանը մեկն եր Մալիքովի անհաշտ հակառակորդներից և նույն վոգով եր տրամադրում նաև իր մոտ սովորող տիրացուներին։ Ձեվ ահա սրանցից մեկը — տիրացու Մուխայլը, համարձակվել եր քննադատելու Ենկենյանի գործերը և չեր կամենում հաճախել նրա քնծայարանը, վոչ միայն այն պատճառով, վոր ծպտված էլատինադավանը եր համարում նրան, և կամ վոր վոչինչ ուներ սովորելու չոր ու ցամաք այդ սխոլաստիկից — ուղի այս ծառ չորարմատ, դրել եր Նալբանդյանը, և էլուներ տալ պատուհն ինչը — այլև խմբակցային

---

* Տես. կաթ. տրխիվ. Ներսես կաթողիկոսի 1852 թ. մայիսի 3-ի գրուքյունը Մինռզին, ուս. նրա գրուքյանց պատճեններէ մատյան, յեր. 272 և հետ.

** «Մասյաց Աղաքեր», 1862, 1 սեպտեմբերի, յեր. 200.

այն նկատառումով, որ ինքը, որպես Պատկանյանի աշակերտ, պարտավոր էին հանդուրժելու կաթողիկոսի նշանակած անպատուգ այդ քահանան. ես գոլով աշակերտ Տէր Գաբրիէլի,— գրել էր Նալբանդյանը,— զինքդ համբերեցից այս*։ Մի այլ նամակում Նալբանդյանը չարամտորեն հարցում էր արել համաքաղաքացիներից մեկի մասին, որ պարտատերերի յետևից փախել էր Շիմիածին և պատսպարվել կաթողիկոսի լայն փեշի տակ**։

Նամակների առիթով գրուքյուններ փոխանակելով Ն. Նախիջևանի և Գիշնևի հետ — Ներսեսը առաջարկել էր Ն. Նախիջևանի քաղաքային մագիստրատին հոգևոր կառավարուքյան դեպուտատի ներկայուքյամբ հարցաքննել հանդուրժն ու տալ նրան արժանի պատիժը։ Վերջավորված քննաստիրուքյունից ավելի ներկա դեպքում դեր էին կատարում, հարկավ, նոր Նախիջևանում տեղի ունեցած հասարակական ներքին բախումները։ Շիմիածնի արխիվում պահված մի գրուքյունից յերևում է նաև, որ համարձակ լեզու բանեցնելու համար, Նալբանդյանի վրա առաջին ձեռք բարձրացնողը Շեկինյան վարժապետն էր հինց, որը ետագրոբինական ծեքտարանուքյամբ պահանջել էր նոր Նախիջևանի հոգևոր կառավարուքյունից՝ հանել նրան ընծայարանի աշակերտների շարքից։ Նույն այս Շեկինյանը, որպես ներսեսին հավատարիմ ազնուականների մեկը նամակներ էր ուղարկում ներսեսին, որոնց մեջ տեղյակ էր պահում նրան Պատկանյան-Նալբանդյան խմբակցուքյան գործունեյուքյան մասին***, ներսեսի մի գրուքյունից յերևում է, որ Նալբանդյանի նամակները իսկ կաթողիկոսի ձեռքն էին հասցրել հինց հոգևոր կառավարուքյան անդամները****։

Բախումը հանգում էր անմիջորեն դպրոցական յերկու տարբեր՝ աշխարհիկ և հոգևոր՝ սիստեմների հակամարտուքյան։ Ժամանակին ինքը Ներսեսը նշանակելի քայլեր էր արել դպրոցական հին, վանական-քաղքիայական ցանցի կոտքին տանգիծելու նոր մի ցանց, որ դպրոցին համամկերպվելու յեր յերկրում զարգացող առևտրա-արդյունաբերական հարաբերուքյուններին և որանց հետ կապված ազգային-յեկեղեցական պահանջներին։ Ներսեսյան

* Շիքվանձ, յեր. 22 և հետ. Հմմ. յեր. 49 և հետ. Շիքվանձ-ում ապված կոպիտ սխալները սրբագրում ենք Շիմիածնի կաթողիկոսական արխիվում պահված պատճեններին հիման վրա. Տես. Շիմիածնի կաթ. արխիվ, Նախկին Սինոդի ֆոնդ, Дело по распред. отд. 1852 № 12а лист 61 и сл.

** Շիքվանձ յեր. 24 և հետ.

*** Շիմիածնի կաթ. արխիվ, Նախկին Սինոդի ֆոնդ. Дело по распр. отд. № 114, лист 30 и сл.

**** Ն. ս. յեր. 27 և 35.

դպրոցի գործունեությունն աչքի ընկնող յերևույթ եր այդ տա-
սակետից։ Սակայն քե այդ դպրոցը և քե դրան հաջորդող հո-
գևոր մյուս սեմինարիաները, տուրք տալով նոր իրադրությանը,
հիմնականում ստորադրված եյին կղերի գաղափարական հնգե-
մոնիային։ Նրանց գերագույն նպատակն եր պատրաստել յեկեղեցու
ջահերին ծառայող հմուտ սիրացուներ։ Սեմինարիաների այդ
սխտամբ կցորդված եր կղերի պրոֆեսիոնալ պետքերին ծա-
ռայող ժառանգավորաց դպրոցների և հոգևոր ընծայարանների
հետ։ Վերջին տեսակի ձեռնարկ եր նաև Ներկինյանի ընծայա-
րանը։ Կիսամիաբանական-կղերական այս տիպի հիմնարկների
դեմ եր հենց, վոր նույն այս ժամանակ հուսահատական պայ-
քար եր մղում Ներսիսյանում արքունական գավառային դպրոցի
վերատեսուչ Արովյանը։ Հետաքրքրական և, վոր Ներկինյանի դեմ
վարած պայքարի ընթացքում Պատկանյանի համակիր քարոզ-
չությանը ժամադակություն եր ցույց տալիս նաև նոր Նախի-
ջևանի արքունական գավառային ուսումնարանի վերատեսուչը։
Մինոգին ուզած իր գրություններից մեկում Ներսեսը հաղոր-
դում և, վոր վերջինս մի քանի անգամ գրած և յեղել քաղաքի
հոգևոր կառավարությանը՝ արդելելու Ներկինյանի գործունեու-
թյունը։ Տեղեկանում ենք միաժամանակ, վոր Ներսեսը կարողա-
նում և հանգստացնել գավառային ուսումնարանի վերատեսչին
Ներկինյանի ոգորին ներքին և լուսավորության մինիստրների
արած միջամտությունից հետո միայն*։ Քի կարելի ասել, ի հարկե,
վոր Նալբանդյանի ուսուցիչ Պատկանյանը այն մարդն եր հենց,
վոր ի վիճակի կարող եր լինել Արովյանի պես սկզբունքային
բարձրությանը վրա դնել հին դպրոցական սիստեմի դեմ վարելիք
պայքարը։ Սակայն, համախոհների ավելի առվոր և կազակերպ-
ված բազմությունն ունենալով իր հետևը՝ Պատկանյանը կարողա-
ցավ ավելի համառ ու արդյունավոր դարձնել պայքարը։ Ներսեսը
հավանորեն հետացնում եր քիֆլիզից անհանգիստ քահանային,
վորչափ վերջինս իր տրամադրություններով ուսական որիյեն-
տացիայի մարդ չեր և այդ տեսակետից նաև՝ հակառակ եր իր
Ներսեսի՝ քաղաքական ընդհանուր ուղեգծին։ Ուշագրավ և, վոր
իր կազմած «Մատկաբաղ ի լիակատար կենսագրությունից Ներսես Ե.
կաթողիկոսի ամենայն հայոց աշխատությանց մեջ Պատկան-
յանը, քննադատելով կաթողիկոսի գործունեությունը, վերա-
գրում և Ներսեսին ամենաճանր հանցանքներ ու կպցնում նրան
ամենաքացասական ճակատներ. ազգի իրավանց հիմը խախ-

* Նշմ. կաթ. տրխիվ, Ներսեսի 1852 թ. մայիսի 3-ի գրությունը.

տող, ազգաքնաս, գավառաան, համիտեհնական քնասապարտ, հայոց յեկեղեցվո հինե դրդող, Արդուքյան Հովսեփ կաթողիկոսացվին քունավորող, նեստոր, սատանա, խաբող աշտարակցի, նուբուզ, հավատապրուժ, մատնիչ հայրենյաց և այլն*։ Այսպես քե այնպես՝ հինգ տարի Գատկանյանին քիֆլիզում պահելուց հետո՝ ներսեսը ուզարկեց նրան գարձյալ Ն. Նախիջևան, վորչափ և ինքը, նեբսեսը, և նրա բարեկամ Յալիբը՝ անկարող եյին քսո յերևույքին դիմադրել քաղաքացիների այդ մասին արվող պահանջներին. ինքը նեբսեսն եր հայորդում քե՝ Գատկանյանը կարողացավ էլ գործ գնել գայնպիսի հնար գի բազումքի ժողովրդականն Նախիջևանա մասուցեալ առ ազնուական քաղաքական գործովա ազայ Յարութիւն Գօդոսեան Ղալուպեանց գինդրագիր իւրեանց՝ քախանձեալ էին գմիջնորդութիւն նորա առ մեզ յարգաս վերադարձուցանելոյ ի նոր Նախիջևան գմշտափորձն յիւրեանս գիարբրիել քահանայն Գատկանեանց՝ վասն լինելոյ նորա ուսուցիչ։ Եւ յիշեալ քաղաքացւոյնն Ղալուպեան՝ ևքէ կամաւ և ևքէ ակամայ խոնարհեալ ի կամս գրաւոր խընդրագրծացն ինքեան՝ խնդրեալ եր գմեր վասն գարձուցանելոյ գնա ընտանեօք ի Նախիջևան, քսո որոյ և մեք ընդառաջակեցաք գնալ քսո նորուն հաճոյիցն։ Հետաքրքիր և, վոր Գատկանյանին ուսուցիչ հրավիրելու համար նոր Նախիջևանից գաո գիմումներ եյին տեղում նաև Աստրախանից, «Ջոյգ ընդ այսմ խնդրագրոյ Նախիջևանցւոց,—գրում է Նեբսեսը,—յետ յերկից աւուրց ընկալաք և նուիրաւորինակ խնդրագիրս աստրախանցւոքե ամբ քաղմաց Աստրախանայ հայոց մի և նոյն գիտաւորութեամբ վասն հրաւիրանս տալոյ նմա գնալ յԱստրախան յադգս ուսուցչութեան, ՝յորժամ և մեք յանձնեցաք նորան կամաց՝ գնալ ուր ինքն կամիցի**։

Գայքարը չսահմանափակվեց պատրոցական այս կռիվներով։ Նույն այս ժամանակներին եր հենց, վոր քորքոքվել եյին Նոր-Նախիջևանի յեկեղեցական գործարների շուրջը ծագած Յալիբ—Հայրապետյան այն բախումները, վորոնց անմիջական մասնակցություն ունեցան Նեբսեսի և Յալիբի հակառակորդ Մատթեոս Վեհապետյանը — քեմի առաջնորդը — և նրա մոտ նախ գրագրի, իսկ հետագայում քարտուղարի պաշտոն վարող Նալբանդյանը, վորը գարձել եր պայքարը զեկավարողներից մեկը, նրա բորբոքիչ վոգին։ Մասնձնելով առաջնորդի պաշտոն՝ տեղացիների, և ամենից առաջ Նալբանդյանի գրգռումով, Վեհապետյանը պահան-

* «Քաբատաւ, 1878, յեր. 70 և հետ.

** Նեբսեսի նույն գրությունը.

ջուսմ եր Յաւլիրից յունական գումարների հաշիվը։ Վերջինս հրաժարվում եր հաշվետվությունից և բոլոր իր ազդեցությունն ու ուժը գործադրում համաքաղաքացիների բռնավարության դեմ։ Ամենից շատ նրան հուզում եր Նալբանդյանի ղրղզական գործունեությունը, ուստի և ներսեսին ուղղած իր նամակներում հրահրում եր անընդհատ վճռափաստ սամադուրի հիվանդության ինքնասիրությունը, պահանջելով, որ արժանի պատիժ տրվի առաջակ տիրացվին։ Ենվ բնորոշ է, որ նախապես քաղաքային մագիստրատին հանձնելով Նալբանդյանի գործը, ներսեսը փաստորեն հենց իրա՝ քաղաքագլուխ Յաւլիրի ձեռն եր հանձնում Նալբանդյանի պատասխանը։ Ներսեսի ցանկությունը գլուխ չեկավ, քանի որ նրա կարգադրություններըը հանդիպում եյին հակախալիրականների գործ դրած միջոցարկումներին։ Գործիք դառնալով վերջիններիս ձեռքին, Քեմակալ Վեհապետյանը վոչ միայն անհանանք քաղց կաթողիկոսի և Սինոդի հրամանը Նալբանդյանին հարցաքննելու վերաբերմամբ, այլև հեռացրեց հոգևոր կառավարությունից այն անդամներին, որոնք ներսեսի ձեռքն եյին հասցրել նրան անհանգստությունը պատասխած նամակները։ Հեռացվածների տեղը Մատթեոսը առաջին առնելով նշանակեց Պատկանյանին՝ շնորհելով սրան... կապոտգլուխ խաուափիլոն և ուսուցիչ կարգելով նրան եմանկանց եկեղեցականաց և ժողովրդականաց, քաղաքացնաց և պիւդացուցա։ Սակայն անհնազանդության գլխավոր ակտը այն եր, որ Մատթեոսը քեմակեան քարտուղարի պաշտոն հանձնեց Նալբանդյանին, կարևոր մի գիրք, որ ազատագրեց վերջինս — ինչպես գրում եր ներսեսը — դառնալու ազգակալար յիւրում վիճակային կառավարութեանց*։

Սինոդի արամադրության տակ դնելով Մատթեոսի այս գործողությունների մասին Յաւլիրից ստացած նամակների պատճենները, 1852 թ. հունվարի 8-ին Սինոդին ուղղած մի կոնդակում ներսեսը գրում եր. «Ենթագէ այժմ Սինոդն և նկատեսցի քէ յանդուգն ներգործութիւնք Մատթէոս եպիսկոպոսի վիճակաւորին Բեսարաբիոյ և հոգևոր կառավարութեան նախընկանայ յոր ատեմեան են բարձրացեալ դի հրամանաց ընդհանրական կաթողիկոսին իւրեանց հակառակեն և զկամս իւրեանց յառաջ վարենա։ Ներսեսն առաջարկում և Սինոդին ջարդեցուցանել զյուրն մատադրութիւն առ բարւոք կառավարութիւն յեկեղեցեաց և արժանաւոր անձ զամենայն անկարգութիւնս ի միջոյ հոգևորականաց նա առավել ի վիճակավորաց և ի հոգևորական առենական տեղեաց գտանողաց պաշտպան չարագործութեանց հոգևորակա-

* Ներսեսի նույն գրությունը։

նաց։ Միաժամանակ Ներսեսը կարգադրում եր ժողովրդին հնազանդվելու Պետերբուրգից ուղարկված էջմիածնի գլխավոր քահանայ Պետրոս Պետրովիչ Ռաստովցևին, որին անձամբ առաջին տալով պատասխանիս Սինոդին էջմիածնից*։

Իր գրավոր բացատրություններում Նալբանդյանը հայտնում եր, թե վոչինչ կապ չունի Ներսեսին հուզող նամակների հետ։ Մեզ չհաջողվեց, դժբախտաբար, գտնել նամակների բնագրերը։ Դատախազական կոմիտեների լռիկայի անսակնտից ինքյան նշանակություն իսկ չունի Նալբանդյանի հնդինակության խնդիրը։ Պարզ և գրեթե, վոր ժխտելով իր առնչությունը նամակների հետ, Նալբանդյանը կամենում եր միայն խուսափել Ներսեսի դատաստանքներից։ 1852 թ. ապրիլին Վեհափառությանն ներկայացրած գրավոր բացատրության մեջ, նա ստղամեջ խոստովանելով, կարծես, իր ճշմարտանքը, գրում եր, վոր յեթե ինքն իսկ յեղած լիներ գրողը, ապա ապատ պիտի համարվեր պատասխանատվությունից, քանի վոր գրությունը տարում անչափահաս պատանի յեր, հազիվ 16—17 տարեկան։ Հայտնում եր այնուհետև, վոր, 1848 թվին խոլերայով բռնված լինելու հետևանքով, տառապում և խրոնիքական քուլությունից, յուսալի և անկարող կատարելու այդքան յեկեղեցի մի ուղևորություն, վորի համար, ի դեպ կպահանջվեր շուրջ չորս հարյուր ռուբլի ծախս, մինչդեռ ինքը, վոր քարտուղարի պաշտոն և վարում ՔիշՆևի հայոց կոնսիստորիայում — հազիվ 25 ռուբլի ռոճիկ և ոտանում ամսականի**։ Վեհափառությանն իր կողմից, արդարացի համարելով Նալբանդյանի վերջին առարկությունները, վորոնց համաձայն եր նաև Սինոդը***, Սակայն Ներսեսը համառեց իր առաջարկի վրա։ 1853 թ. հունվ. նա հայտնում և արդեն Սինոդին, վոր դիմում և արել փոխարքա Վորոնցովին՝ խնդրելով վոստիկանության ձեռքով վորոնել տալ և էջմիածին ուղարկել Նալբանդյանին****։ Այդ չնայած նրան, վոր Վեհափառության գրած գրած ինչ վոր հնարով Նալբանդյանին հաջողվել եր մինչև ոտանալու Սինոդից 1853 թ. մայիսի 15-ի արտգրի հիման վրա կազմված տարձակման քուղքը, վորով ապատ եր ճանաչվում հա-

* Նշմ. կաթ. արխիվ, Սինոդի ֆոնդ, 1852 Дело по расп. отд. № 12, fol 12 и сл.

** Գիվճան, յեր. 47 և հետ. համմ. Նշմյանցի կաթ. արխիվի վերը նշած գործը, քերթ 16.

*** Գիվճան, յեր. 33 և հետ. և Նշմյանցի կաթ. արխիվ, ն. տ. քերթ 33 և հետ.

**** Սինոդի արխիվ, ն. տ. քերթ 89.

պետք կաչառումից, հետևաբար նաև՝ եկեղեցական իշխանությանը չեն-քարկվելու պարտավորություններից*։

Վորոնցովի միջամտությունը եկեղեցական գործերի շուրջը բորբոքած պայքարին պատահական բնույթ չեր։ Այդ միջամտությունը ակներև էր դարձնում հայ լուսավորչական եկեղեցու գերագույն վարչության ու ուղղափառ-կաթոլիկանական դիվանատան որոշումների վերա այն դաշինքը, վոր հաստատվել էր Ներսեսի օրոք։ Միաժամանակ բերևան էր գալիս պատակարգային այն հարցադատությունը, վոր շարկապում էր Վորոնցովի և Աշտարակեցու անձերը Յալիրովի վոսկու քսակի հետ։ Ներսես Աշտարակեցուն ուղղած նամակներում Վորոնցովը հրճվանքով է խոսում իրա և Ներսեսի երնդհանուր բարեկամի՝ Յալիրովի հետ ունեցած հանդիպումների մասին. Յալիրովը, ըստ Վորոնցովի, Նախիջևանի ազգությունը չի մերոյն, այլև նրա հոգեհարը**։

Պաշտպանվելով Վորոնցովի հետապնդություններից Նալբանդյանը փախչում է Նոր Նախիջևանից Ռիշնև, իսկ այստեղից՝ Մոսկվա։ Հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում այդ մասին Ս. Մելոյան Հայաստանի Կերքի խմբագիրը Գ. Սիմեոնյանը։ Գրում է, վոր իրեր իրեք 1853 թվի մայիսին Դորպատից վերադառնալով հանդիպել եր Ն. Նախիջևանի, նույն որը Ռիշնևից ժամանել եր նաև առաջնորդի քարտուղարը՝ Նալբանդյանը. Հետևյալ որը, — գրում է Սիմեոնյանը, — քահանայի փիլոնով ներկայացան նորան, վոր ապացուցց եր նորա ազգային անձն լինելուն։ Այդ միջոցին Ն. Նախիջևանի մագիստրատը առացած եր հրաման Կովկասի փոխարքա իշխ. Վորոնցովից, համաձայն պահանջման ընդհանրական կաթոլիկոսին Ներսեսի, կալանավորել Միքայել Նալբանդյանին և վոստիկանության միջոցով ուղարկել Ներսես Ե-ի մոտ Նոր Նախիջևանի քաղաքապետության եր Հարությունյան Յալիոյանը։ Սա հրամանի կատարումը քաղցում է մյուս որվան, վորպեսզի գնի մի որ ծնողները վայելեն իրենց վորդու անուշությունը։ Վորոնցովի հրամանը պատրի յեր և Յալիոյանը ապահով եր, վոր նա վոչ վոքի հայտնի չեր Նալբանդյանի գալստյան յերեկոյ ի տեր հանդուցյալ Գաբրիել սիրազ քահանա Գասպարյանցը, վորի աշակերտն եր յեղած Նալբանդյանցը, գրասենյակ գնաց վերջինի հետ քաղաքից դուրս իմնչ խոսացին, իմնչ հաղորդցին միմյանց հայտնի չեր։ Միայն մյուս որ Նալբանդյանցի հոր տանը աուգ եր, վորավհետև այդ գիշեր նա անհայտացել եր, չգիտեին ուր և գնացել, կամ արդյոք Դոն գնալը

* Հմմտ. այդ մասին Հանդ. գրոհ. և պատմ. VII, յեր. 34.

** А. Эрицов. „Патриарх всех армян Нерсес V, князь М. С. и княгиня Е. К. Воронцовы в их частной переписке", стр. 68 и сл. и стр. 78.

չի ընկել և կամ սպանվել։ Անցավ տաս որ և լուր տարածվեցավ Նոր Նախիջևանում, վոր Միքայել Նալբանդյանը Մոսկվայումն և. բացատրելով գործն այնպես, թե Մ. Նալբանդյանցը տ. Գարբինել Պատկանյանցից իմանալով յուր կալանավորության հրամանը, նույն գիշեր ծնողներից ել գաղտնի գնացել ևր Ռոստով և այստեղից փոստային կառքով քոռել ևր Մոսկվա, ուր պաշտպանությունն ևր գտել*...

Ետա յերևույթին Սիմեոնյանն ուզիղ և պատմում յղելությունը։ Անհրաժեշտ և նկատել միայն, վոր Ն. Նախիջևանից Նալբանդյանը փախուստ տվեց վոչ թե Մոսկվա, այլ՝ Գիշնև, վորտեղից, խուսափելով վոստիկանական ագենտների աչքից, նույն տարվա հունիսին և միայն, վոր ապավինեց Մոսկվա։ Այս մասին և վկայում Ներսեսի ագենտներից մեկի՝ Նալբանդյանի հետապնդմանը մասնակցող Աարգիս վարդապետ Ջալալյանի՝ 1853 թ. հունիսի 18-ին Գիշնևից Մոսկվա՝ Մաղիստրոս Մանրյանին՝ ուղղած մի նամակը, վոր գտնում ենք վերջինիս արխիվում։

«Միքայել պիկր Նալբանդեան,—հաղորդում է էթաբեկամաքարտ Ջալալյանը,—վոր առաքեալ է սրբազան վիճակավորն այդր ի Մոսկով առ ի առանալ ի ձենջ գուսման վկայական, փախստականն է դա ի վհատիտա կաթոդիկոսէն. դի վասն յանդուգն և ժպիրն գրուքեանց գորա՝ պահանջեցան ի ձեռն փոխարքային կովկասու, և երբ գտանէր դա՝ ի Նախիջևան՝ նհաս անդ և հրաման փոխարքային։ Մինչ կամեցաւ ուռնալ և առաքել ի Տփղիս՝ ի ձեռն պահապանաց՝ փախեաւ անդի ձեռամբ Պատկանեանի, ևկն ատա (վորպէս դրէ քաղաքական գլուխն տեղւոյն). իսկ երբ հասին ատաննօր պահանջմունք մաղիստրատի տեղւոյն՝ դի բռնութեամբ վերադարձուցանեն, ատա ևս փախեաւ այդր. վասնորոյ ատմ ձեզ բարեկամական տեղեկութիւն, դի մի յապայեն վշտասցի ի ձենջ նորին վնհափառութիւնն։ Նույն տարվա սեպտեմբերի 18-ին Ջալիբովը հաղորդում ևր Ներսեսին՝ «Ի Մոսկօֆից եկօղաց լուր եղև մեզ. թէ Միքայէլն (sic!) այդ, ըստ առաջադրութեան առաջնորդին, անդրին հայոց լեզվի վարժապետ կարգեցեալ է ի յուսումնարանի անդ»** Ջալիբովը կանխում ևր դեպքերը, բայց չեր սխալվում։ Մատենադարանի վհհատիտյանի Լազարևների առաջ հարուցած հանձնարարականով Նալբանդյանը Մոսկվայում հայոց լեզվի կրտսեր ուսուցչի պաշտոն ստացավ ևրանց ճեմարանում։ Նույն տարվա հոկտեմբերին միայն, վորի համար անհրաժեշտ ցննդ ձեռք բերելու նպատակով անցել

---

* «Հայրենիք», 1901, Ա. յեր. 284—5.

** Ջալիբովի կաթ. արխիվ. 1853 թ. գործերի մեջ.

եր նախատես Պետերբուրգ և համապատասխան քննություն բռնել համալսարանում։

Նալբանդյանի հաջողությունը լազարևների մոտ ուներ իր պատճառները։ Հայտնի չե այդ զժտությունը, որը անցել եր այս պահին լազարև կեդրոնների և Ներսեսի միջև, ինչպես նաև այն բռնկամտությունը, որը հատատակել եր լազարևների և Նալբանդյանին հանձնարարող Վենետիկյանի միջև։ Վերջինս խախտելով կանոնադրական իրավունքը 1852 թվին կատարել եր Մուրատաձոր լազարևի կեդրոն ազգինների և նրա կեդրոն քահորդիների (Ինչիճանովի և Աբամելիքի) էչհատ պատկը, վորով բորբոքել եր իր զեմ Ներսեսի զայրույքը և միաժամանակ հակամարտություն հուզել սրա և լազարևների մեջ։

Մանրի ապրելուց պատանք անհայտ հեղինակի գրած մի վոտանավորը, վոր պատասխանում է քառամենայնի Մատթեոս Վենետիկյանի և նրան հովանավորող լազարևների ազգակործան ընթացքը.

Հնդիկոպոս Մատթեոսը,
Ներսեսի մեծ չարախոսը,
Լազարյանների բանով բռնվով
Փորից հարց ազգի վոսը։

Արձակից նախ յուր գնապանը՝
Մխիթար կոչյալ Նալպանդյանը։
Ի Պետերբուրգ և ի Մոսկով,
Վոր ուշեսան չինեն բանը։

Հետո և ինքն յեկավ գընաց,
Բայց մըտոքն կայր ստատանած։
Ասչուկին ասաց. «Հնդոպ մի անիր,
Ո՛վ Սըրբազան, այլ հանգիստ կաց։

«Մենք կայսերին յավ ծանոթ եմք.
Ենվ մեծերին նուչնպես մեծ եմք.
Ինչ ձեր կամքն և և ցանկությունն
Նոցա ձեռաք հենչա կատարեմք։

«Ենկնդցյաց յեմք հոգատարք,
Իշխանք ազգի արժանապատիվ,
Ենվ Թուրքիս կայսերներից
Ունեմք պնապես օրգնի ու վարձ։

«Ենքն Ներսես պատրիարգը
Վեր առնու ձեր վեզար կորգը,
Մենք ձեզ ազրուստ կտամք առատ,
Ըզպակսիր ձեր անվան հարգը։

Քիչ չորհնեն ըզպատկը,
Մենք բաց կանենմք մեր քրտակը,
Ինչ վոր ուզեմք՝ կըկատարվի
Ձի մեր կծզեն և և Վառակը։

Քեզ ավետիք, ազգ հայկազյան
Քո Մատենագը աբըբազան,
Մանկովմը հանգիստ նըստած,
Գըրում է նոր ավետարան*։

Հաս-չհասի այս վիճակը — հակամարտությունն ասիքին ևր, անշուշտ, բայց վոչ նրա պատճառը։ Անժառանգ ադատպատանների համար ըչհասած պատկն ինքյան միջոց ևր ամփոփելու տոհմի հարստությունն առկա մերձավորների շրջանում։ Ընկերցողական կանոնի միջամտությունը դալիս ևր, ընդհակառակը, ետաբերյ բաժին դարձնելու նրանց ատացվածքը։ Սակայն հաս-չհասի շուրջն առաջ յեկած բախումը լուրջ աշխարհ ևր հանում նաև փոխադարձ այն անբավականությունները, վոր կուտակվել էին տարիների ընթացքում Լազարև իշխանների և հայ-լուսավորչական յեկեղեցու պետերի միջև։

Լազարևները հայ առաջնորդների և հայ կաթոդիկոսների ժխտելին ևին։ Նրանցից և, վոր կախում ունեին Պետերբուրգի և Մոսկվայի հայ տերտերներին ու գործակատարները, նրանք և, վերատրին, վոր նշանակում էին և տապալում քեմի առաջնորդներին, և նրանք և, մեծ չափով, վոր առաջ էին քաշում կաթոդիկոսական քեկնածուներ և ազդում նրանց քաղաքականության վրա։ XVIII դարի վերջերին և XIX-ի սկզբներին, Ադրպեջանի և Ցեղրեմի առաջնորդության ժամանակ, նրանք կարող բլանչ էին առանում վերջիններիս առորագրության և անձական բարեհաճության ոգությամբ դիմումներ անում ազգի և յեկեղեցու անունից ռուս քաղաքական շրջաններին։ Ցեղրեմի և ըստ յերևույթին նաև Կարբեցու որոք նույն կարգի էրաց առորագրյալ կոնդակներ էին առանում նրանք նաև Ըջմիածնի կաթոդիկոսներից։

Այլ ևր Ներսեսի կաթոդիկոսության ժամանակ, վորը միահանձանորեն ևր վարում յեկեղեցու գործերը և հենվում անմիջականորեն կովկասահայ ազնվականության և առևտրա-վաշխառական բուրժուազիայի վրա։ Ցեղրե կարիք կար բարձրացրը հենարանի՝ այդպիսին նրա համար փոխարքա Վորոնցովն ևր, վորի գործիքն ևր և վորի շնորհիվ առաջադրում և յուծում ևր հանձնե ազ-

* Վառաձավորի մեջ հիշատակված Աչյունը՝ Աչյին ազան ևր՝ Աբրահամը Լազարևը, Վառակը, համանունն՝ Գևլեհանվոր։

պային-ֆեոդալական բարդ խնդիրներու։ Այստեղից և հենց, որ ծայր կը առնում Ներսեսի և Լազարևների հակամարտը, որը շարունակվից վաստոսեն նաև Ներսեսի հաջորդների — Մատթեոսի և Գևորգի օրոք, որոնք, կապված լինելով քյուրքահայ ամիրայական դասի ու կոմպրադորական բուրժուազիայի հետ, կարիք չէզացին զարձյալ Լազարևների մենաշնորհության։

Լազարևների վերաբերմամբ ընդմիսձեի գրաված դիրքի մեջ Ներսեսի օրերից ծայր առնող այս շրջադարձը մեծապես հարմարում էր նրանց տոհմային ինտերեսներին։ Լազարևները ոգտագործում էին հայ կղերի և վանականության վրա իրենց ունեցած ազդեցությունը՝ Բուլասատանում հարստություն, դիրք և պաշտոններ ձեռք բերելու համար, ինչպես և, ընդհակառակը, շահագործում էին իրենց գրաված պաշտոնը, դիրքն ու հարստությունը հայ ազգի և եկեղեցու գործերի վրա ազդելու նպատակով։ Ներկայիս մի առանձնություն էր այս, որ անում էր նաև յերկիսյայր մի մասնություն։ Լազարևները ազգասեր էին և միաժամանակ նաև տատրասեր։ «Ազգի բարերարներն» էին, բայց և չարաչար գամպրոններ ազգի շահերի դեմ։

XVIII գարի կեսերին, չվելով Պարսկաստանից. Բուլասատան, Լազարև-պապերը տակավին հետու իրենց վորդիների այս առաքինություններից ու արատներից, ծառայում էին բացառապես վտակն հարքաղքին։ Լազարևների տոհմային արխիվում պահվում է տակավին Նազարեթ Լազարևի վորդիներուց՝ Հարությունի, Ազազար և Մանուկ յեղբայրների՝ 1741—1760 թվականների առևտրական հաշվեմատյանը, «Բուլղամա» վերնագրով, վոր քնորոշում է լիովին Լազարևպապերին։ Մատյանը գրված է Նոր Ջուգայի բարբառով, պարսկական լեզվի ազդեցությամբ հագեցած, նպատակ ունի գարի յերանգը պեմքին։ Բազաքացիական պատերազմների ժխորից հեռացրված ամիրայանական էին Բուլղամաքի հեղինակները, իրանահայ մեծահարուստ խոջաներ, վորոնք, հանգրվան գտնելով Բուլասատանում, տարված էին բացառապես առևտրանքի ու գրամադրքի շրջանառության հոգսերով, ազատ ազգային կամ քաղաքական նկատառումներից և հավակնություններից։

Այլ էին նրանց անմիջական հաջորդները, Լազարև-հայրերը։ Հնչուն գրամին արանք կցել էին արդեն կալվածական հարստություն, խոջայական գազ ու բանիմանը փոխարինել հարստահրապան փարթիկի սառնակով։ Հարստություն գարձել էր արանց Աբևնքի գռները բախող ցարիզմի սիրելին. ազնվական գիրքի հետ մեկտեղ նրանց տրված էին դիպլոմատիական ու ռազմական բարձր պաշտոններ ու հանձնարարություններ։ Անդրկովկասի

նվաճման նախօրեին եր այդ, երբ ցարիզմը կապեր եր փնտրում հայկական վերնախավերի հետ և երբ վերջիններս պատահար կարող էին լինել ցարիզմին ամենից առաջ հենց իրենց ազգային-կուլտուրական առանձնահատկություններով։ Լազարև-հայրերը դեռ չէին կորցրել այդ առանձնահատկությունները։ Ճիշտ և, նրանց դրագրությունների մեջ Ջուղայի կենդանի բարբառը տեղ եր գտել մեռած գրաբարին, բայց հենց գրաբարն եր ժամանակի պաշտոնական բանավարության միջոցը։ Նրանք պահպանել էին հայկական բարք ու վարք, ազգային կրոն, ծես և միաժամանակ շահախնդրություն էին հայտաբերում ազգային և եկեղեցական իրավունքների պաշտպանության խնդրում։ «Ջարմանամ, — գրում եր 1813 Ք. հոկտ. 20-ին Քվակիր Նամակում Ճեկիմ Լազարևիչը իր վորդիներին — Իվան և Աբրահամիր Ճեկիմիչներին, — որ հայերէն գրություն ձեր գտնուցեալ էք քոտանըէն, ոչ ապագին բարուք է յինէն ձեզ ուսանիլ, որ լինիցէ քէ՝ գոր ինչ հայր առնէ, որդին նման սմին գործէ»*։ Հետաքրքրական դեմքեր էին առհասարակ Նամակի հեղինակ Ճեկիմ Լազարևիչը (1743—1826), ինչպես նաև նրա եղբայր Իվան Լազարևիչը։ Հայտնի չեն նրանց մասին ու ծրագիրները հայերի ազգային-քաղաքական անկախության խնդրի վերաբերմամբ։ Գործնականապես ուշադրավ և Պետերբուրգի և Մոսկվայի հայ եկեղեցիների կառուցումը նրանց ծախքով և մանավանդ նրանց առհմային անունը կրող ճեմարանի հիմնադրումը։ Միասնելով ցարիզմի արևելյան քաղաքականության շահերին, Լազարև-հայրերի նշանավոր այս ներկայացուցիչների հիմնադրած այդ ճեմարանը սկզբնապես կարևոր տեղ եր հատկացնում նաև հայերի ազգային-յուսավորական գործին։

Սակայն շատ բան փոխվեց հայերդների, Լազարև-վորդիների օրոք։ Սրանց օրոք խուճապավ հետզհետե Լազարևների ազգային նկարագիրը։ Ճեկիմ Լազարևիչի բազմաթիվ ազգականներից ու ազգիկներից հայերեն շատ-քիչ գիտեր միայն Աբրահամիր Ճեկիմիչը։ Իվան, Լազար, Աբոտեմի Ճեկիմիչները գրում եին բացառապես միայն ռուսերեն կամ ֆրանսերեն։ Իվան և Լազար Ճեկիմիչները ամուսնացան ռուս ազնվականուհիների հետ։ Ռուս կամ ռուսացած ազնվականների զեռացին Ճեկիմ Լազարևիչն և նրա քրոջ—Աննա Լազարևնայի—ազգիկներից շատերը։ Իր «Ազգապատումն»-ի մեջ հասնելով 1871 թվականին կղերամիտ պատրիարք Մ. Մանդյանը արձանագրում և սարսափով թե՝ այդ տարվա հոկտեմբերին Բրյուսելում մեռավ Լազար Ճեկիմիչը՝ «հետ քննդունելով

* Լազարևների արխիվ, գիրք 107, վավերագիր 13.

գործը հաղորդությունն ի ուս քահանայէն, իսկ մի յերկուս ամիս անց, նույն տարվա դեկտեմբերին, Պետերբուրգում մեռավ Արխատաիսար Եկեղեցին՝ տառանց քննությանյ գործը հաղորդությունն։

Իրենց սոցիալական դիրքով Հազարն-վորդիները մեծահարուստ կալվածատերեր ու ֆաբրիկատներ չէին միայն, այլև՝ պետական ծառայության մեջ գտնվող պետվորականներ ու բարձր պաշտոնատարներ։ Արտեմի Եկեղեցին սպանվեց 1813 թվին, Հայպղծի հակառակության ժամանակ, վորպես ուս սպա։ Հազար Եկեղեցին, վոր 1828 թ. դեկտեմբեր պարսկահայերի գազթը Անդրկովկաս, գնդապետի աստիճան ուներ։ Իվան և Արիստարքոս Եկեղեցիները, Հազարյան ճեմարանի տաղտապաշ-հոգաբարձուները, կամերյունկերի և իսկական գաղտնի խորհրդականի աստիճանի հասան։ Հազարճենների արխիվում պահվել են Մալերանակու, Արակչեյեվի և Բենկենդորֆի գրանց գրած մանրամասն նամակները։ Հազարճեններ-վորդիները մասնակցում էին պալատական խնճույքներին և սրբքում բանկետներ, վորոնց մասնակցում էին ցարի մերձավորները։ Անդրկովկասի նվաճումից առաջ նրանք բարեբախտություն էին համարում փոքրիկ այս կերուխումը, ուտած և ամապարում էին գուռնա փչելով ծանուցում անել այդ մասին միամիտ ազգին։ Այսպես 1823 թվի մայիսի 23-ին գրած մի նամակում Իվան և Արիստարքոս Եկեղեցիները ավետում էին Ռուսաստանի հայ քաղաքակիր աստվածորդին, վոր վերջին յերկու ամսվա ընթացքում իրանց մոտ ճաշել են չորս անգամ գրաֆ Արակչեյեվը, գրաֆ Կոչուբեյը, կնյազ Կուրակինը, մինիստր Լաբանովը և Գոլիցինները, Ալեքսանդրին ևս պիտի կրաֆ Արակչեյեվին է առաջին սիրելի և աչ քաղաքակիր կայսերը, որև դեռ սիրէ իրրև գերադասատ եղբայրս իւր և է զօր հանդարտ քնէ մնգա։ Նույն նամակում Իվան և Արիստարքոս յեղբայրները գրում են թե մտադիր են անով-անդով փոխադրվել Մոսկվայից Պետերբուրգ՝ «Քանզի ի լինել մեր հուպ առ իշխանս՝ նա գիւրին յոգիցի մեզ ծառայել առքուքնան և բարձրանալ աստիճանէ յաստիճան, օգտակար և հոգատար լինել ամենայն գործոց սիրելի հասարակութենան մերոյ և մերոյ ակնեցուոյ սրբոյ, որում քան շատից ծնօղաց մերոց նուիրեալ եմք զաւուրս մեր և կարողութիւնս*։ Հազարն յեղբայրները կատարելին, իրոք, իրենց մատղությունը և Պետերբուրգի շրջապատը նպաստեց, իսկապես, նրանց կատիրայի հաջողությանը։ Բայց վորևե բան շահեցին գրաֆներից «ազգը» կամ «եկեղեցին», վորոնց անունով յերդվում էին նրանք։ Հատկապես բնորոշ և Հազարյանների ուսաֆիկատորական

* Հազ. արխիվ, դիրք XVI, № 166.

շրջապատված Անդրկովկասի նվաճումից հետո նրանք Արտիշևների և Բենկենդորֆի խնամակալության տակ դրին ազգի «չքավոր մանուկների» անունով հիմնված ճեմարանը, և յերբ ներկայիս կաթողիկոսները պահանջում եյին իրենց իրավասությանը յենթարկել ճեմարանը՝ Արիստաֆոր Բեկիմիչը արհամարհական այս խոսքերը մակագրեց հիմարական այդ դիմումի վրա՝ „Отказано по неудобству и неприличию, соединить светские с духовным армянским заведением вредно. Тем более что Лазаревский институт процветает без всякого участия армян и их духовенства. Русских платящих пансионных и других наций достаточно армян состоятельных и богатых; пускай они скупятся, или отдают в другие заведения". Հոգևոր և աշխարհական հոգատարների այս հակամարտության մեջ ներհակությանը ճեմարանի վարչության շուրջը չեր միայն, այլ և յեկեղեցու վարչության շուրջը: Արիստաֆոր Բեկիմիչի նամակների մեջ կան բազմաթիվ գրություններ, որոնք ամենաուշ քննադատություններն են պարունակում ներկայիս վարչական և անտեսական սիստեմի մասին: Նա մերկացնում եր հատկապես նրանց նեպոտիզմը և յեկեղեցական գրաճների ու քանդագործը իրենների քալանը: Արիստաֆոր Լազարևը գայրույթով եր արձանագրում այն փաստը, որ, մոտալուտյան տարով իր տոհմի ծառայությունները, հարստությունն ու դիրքը, կաթողիկոսները շրջապատում են իրենց մարդկանցով, որոնցից իրական վոչ մի օգուտ չի սպասում ազգին կամ յեկեղեցուն, — „ибо без просвещения в науках, без образования, без средств и без капиталов мало успеешь в одних только обманчивых надеждах и предположениях, когда ни те, ни другие не имеют законных оснований"*. Արիստաֆոր Բեկիմիչի կարծիքով կաթողիկոսների վարքագիծն ե հենց, որ պատճառ և դարձել յեկեղեցու հեղինակության անկմանը, նրա կազմալուծմանը, որքատորի ծավալվող գավանաբանական յերկպառակությունների և այլն: Սրանով և բացատրում նա կաթոլիկական և բողոքական շարժման հաղթությունները ներկայիս քրիստոնեության մեջ՝ Շամախում, Շուշում և այլուր**. Սակայն Լազարև-վորդիները չեն սահմանափակվում միայն յեկեղեցու վարչական-անտեսական ոլորտի քննադատությամբ: Նրանց գրիչները նաև նրա գավանաբանական հայացքների հերյուրանքներին Բեկիմ Լազարևիչն ե, որ ատրպատրիոտով յեկեղեցին ազգայնության սկզբունքին, գտատպարտում եր գավանա-

* Հոգ. տրքվ. գիրք I. №2.
** Ն. տ. №2.

յոնական խորհրդանիշ քյուններով և հանձնարարում ազգին հայ յուսամոլչական նեղմտութեան փոխարին՝ ազգային-քաղաքական յայտնախոհութեան: Նրա հրավերով ճեմարանի ուսուցչական խմբի մեջ մեզ տան հայ-գնչու Հարութեան Ալամդարյանը, կաթոլիկ յնկեղեցու ծոցից յեյած Սերոբի վարդապետն ու Մալչանեթյանը: Ուսուցչութեան առանձնելու հրավեր ուղարկեց նա հայ կաթոլիկ Հակոբ Շահան-Զրոխեանցին և մխիթարյան վարդապետներին: Վերջիններին ուղված նամակներում XIX դարի սկզբներին Ճեկիմ Լազարևիչը հայտնում էր ազգի և կրոնի հարաբերութեան մասին տեսակետները, որոնք քաղաքացիութեան առացան հայ կյանքում միայն նույն դարի վերջերին: Ընորոշ և ուսկյին, որ ռուսիֆիկացիայի ուղին բռնած նրա զավակների որոք հոր հայտնաբերած յայտնախոհութեանը հայ և ռուս յնկեղեցիները միացնելու մտայնութեան կիրպատրանք առած: Իվան և Պրիստաքեր Ճեկիմիչների քյքներում պահվել են մի շարք հայ գործիչների — Մ. Կյումուշխանեցու, Մալչանեթյանի, Ալ. Խուդաբաշևի, Կարապետ Շահնազարյանի և Սա. Նազարյանցի — Լազարևների հանձնարարութեամբ գրված բնագրման տեղեկագրերը, որոնք յուսադրում էին հայ յնկեղեցու դավանարանութեան խնդիրները և շրջանցում առանձնապես հայ և հույն յնկեղեցու տարաձայնութեանները ու չփման կետերը: Ընդհում և, որ Լազարև-վորգինները կշռում էին յնկեղեցիների միութեան հնարավորութեանը, անդադում հնարավորը իրականացնելու ուղինները... Մատենադարանի ձեռագրերի ճեկիմիչը, ավարտելով յերկար տարիների ընթացքում տարած նախապատրաստական այս աշխատանքը, գրավոր գիմում ուղարկեց Ընկիսիցին, որտեղ առաջարկում էր փոփոխութեանները մացնել հայ յնկեղեցական ծեսերի և արարողութեանների մեջ: Մեր ձեռքի տակ կա Մատենադարանի 1860 թ. մայիսի 20-ին Պրիստաքեր Լազարևին ուղած կարևոր նամակը, գրված վճռական ու խիստ մի տոնով, որ խորապես վիրավորական պիտի յիներ պատվիրանը ազգասերի համար:

Լազարևների և Ընկիսիցի միջև առաջացած և տարիների ընթացքում աճող այս հակամարտութեանն ի ահա, որ ոգտագործեցին Ներսեսի հակառակորդները ու Նալբանդյանի բարեկամները — Վեհապետյանը և Սա. Նազարյանցը — կաթոլիկոսի յերեսից փախստի գիմած ճնապարհը դարի համար հանդիման գտնելու նպատակով: Լազարևների պաշտպանութեանը վերին աստիճանի դժվարացրեց, իհկապես, Ներսեսի և արքեպիսկոպոսների վիճակը: Պատվիրութեան ատրքելով Գաբրիել Պատկանյանին գեմ, Ալիքը

կարոզացել եր անվտանգ գարձնել յեռանդուն այս հակառակորդին։ 1853 Թ. ոգոստոսի 11-ին Պատկանյանը ձերբակալությամբ յեն-թարկվեց՝ մեղադրվելով Թալիրի դեմ մահափորձ կազմակերպելու մեջ։ Տասնյակ տարիների ընթացքում մատնված եր կալանքի, աքսորի ու լիակատար հասարակական չեզոքացման։ Բնորոշ և, որ Լազարևները չանք գործադրեցին հատուկ միջամտությամբ մեղմացնել քահանայի վիճակը։ Հակառակորդները չսահմանափակվեցին Պատկանյանի կղզիացումով։ Հրապարակի վրա Թացել եր տակավին Վհոսպեսյանը և մանավանդ նրա պլոտավոր հրահրիչը — Հանդուգն տիրացուն, որին Հովանավորում եյին գործակալ նույն Լազարևները։ Թալիրովը տեղեկացնում եր Ներսեսին, թե Պատկանյանին վերագրվող հանցագործությանը մասնակից և համաբուժնան Վհոսպեսյանին, սակայն ստիպված է լռել այդ մասին, տեղի տալով կաթողիկոսի հրահանգին։ Զգկացին մեր վասն մասնակցությանն նաև վիճակավորին, ի բաց հեռացուցաք ամենևին ի բերանոյ մերմէ և ի մտաց ամենայն ակնածությամբ տուր հրամանաց ձեռնումդ վհոսպեսյանց,— գրում եր Թալիրովը Ներսեսին 1853 Թ. սեպտ. 18-ին*, վորով հայտնի յե դառնում Ներսեսի այն յերկյուղը թե յեպիսկոպոսի շրջանքին փաթաթվելիք ծանր հանցագործությունը կարող եր, ըստ ցն, անվտանգ գարձնել հակառակորդին, բայց և միաժամանակ վտանգել կղերի հավաքական շահը։ Նման փոփիանկատությունները վերանում եյին, հարկավ, յեկեղեցու փոքրավորների վերաբերմամբ։ 1853 Թ. նոյեմբերի 17-ին Զալալյան վարդապետը նոր Նախիջևանից գրում եր Մոսերին ԵՅեղիայս մագիստրոսին պահանջելաց ի՝ պօլիցայէն՝ Մոսկուայ առաքել առ ինքն զառահակ նալբանդյանն և գարմանամ՝ թե գիւրիդ ապահանք (խոսքը Լազարևների մասին եվ Ա. Հ.) գնոյն օրինակ՝ անարժանն կացուցանեն վարժապետ մատաղ և քնքոյշ մանկանց, որ չգիտէ ինչ առնել, եթէ վոչ ապահանել զարարչականութիւնս առջին գլխովին, որ գառն է քան զմահ։ Փոքր ինչ հետո, դեկտեմբերի 8-ին Զալալյանը, պատասխանելով Մոսերի ինչ վոր մի գրությանը, ուղարկում և նրան Մոսկվայի վոստիկանության անունով մագիստրատից առացած քղքների համարը։ Եվս յուսամ,— գրում և Զալալյանը,— որպէս գուք՝ նոյնպես նորին գերազանցութիւնն Ն. Ց. Էմինեան (այսինքն՝ Մ. Էմին. Ա. Հ.) չարժեսջ հոգվով հայրենասիրութեան հեռացուցանել զղոյնպիսի անձն ի վարժապետական պաշտոնէ՝ խնայելով միանգամայն ի մաքուր և յանարատ բարոյականութիւն արդարամիտ մարդկանցս։ Մոսերի արխիվում պահված արագրություն-

* Նրմխածնի արխիվ, 1853 Թ. գործեր։

Ներկայ պարզվում է, որ նա անընդհատ պատասխանում էր Զաքարյանի դիմումներին և իր հերթին խնդրում աշխատանք տանում Նալբանդյանի գնահ. Նա որպեսզի Նալբանդյանի մասին Մանրը պրոբլեմներ և ուղարկել Զալալյանին 1853 թ. նոյեմբերի 9-ին, 23-ին, դեկտեմբերի 21-ին, 1854 թ. հունվարի 14-ին, 25-ին, մարտի 1-ին: Ենթադրում է պարզել, որ նույն այդ ժամանակահատվածում Մանրը նամակներ է գրել Նալբանդյանի վերաբերմամբ Պետերբուրգ՝ Հովհ. Լազարևին, Դիլիջանովին և Ալթունյան վարդապետին, Թիֆլիս՝ Կարինյանին, Մոսկվա Սայաթ-Նովյան քահանային և Ներսես Աշտարակեցուն: 1854 թ. հունվարի 25-ին Մանրն արձանագրում է որպեսզի «Ես Սարգիս վ. Զալալյան ծանուցանք պետրանդյանի ըմբռնելը... ն. ս. հունվարի 29-ին՝ «Ես Հովհ. Լազարյան ի Ս. Պ. Բուրգ. ազգումն գրուշացուցիչ Առ Իվան Դուխինիչ Տելյանևանց ի Պ. Բուրգ. ի նոյն միտս Առ Սարգիս վ. Զալալեան ի նոր Նախիջևան ազգումն գանցիկ Նալբանդեանէ և այլն:

Զալալյանի և Մանրյանի ջանքերը՝ խանգարելու Նալբանդյանի գործունեան պաշտոնը անմիջական արդյունք չտվին: Հաջորդ տարվա փետրվարին 5-ին թվագրված նամակում այդ մասին և ակնարկում Զալալյանը՝ «Գոյի չէ թե քեզմեամիան այն պաշտպանէ առահասին և բարեկամ նոյնպիսի առաքինատուրկ անարժան պատանուց, սրենեն չէ ինքեան բարեկամս: «Քեզմեամիանց քան յերևույթին Մանրն և Զալալյանի յերրենեի բարեկամ Ստ. Նազարյանցն եր, որ 1853 թ., ծանոթանալով Նալբանդյանի հետ, դիմակցություն եր կնդել նրա հետ, Ներսեսի և յուրայիններեի դեմ:

Լազարյան հեմարանի գիվանի թղթերից յերևում է, որ քաղաքագետի կարգադրությամբ տակավին հունվարի 23-ին քաղաքամասի պետ Դեմիդովը, ձերբակալել և վոստիկանատուն եր տարել Նալբանդյանին՝ ն. Նախիջևանի մագիստրատի պահանջի համաձայն նրան հատուկ պահակախմբով ընկերացնել ուղարկելու համար: Արդյոք ձերբակալածի հիվանդությանն պատճառով եր, ինչպես ասված է մի տեղ, թե Լազարևների միջամտությանն հետևանքով, ինչպես հետագայում պնդում էին վերջիններս, վոստիկանությունը, հենվելով Ստ. Նազարյանցի և Ալամխանյանի յերաշխավորությանն և այն փաստի վրա, որ ինչ որ հնարքով Սինոդի վճռով Նալբանդյանը արձակված եր հոգևոր կոչումից, ուստի և ազատ էհոգևոր իշխանությանն իրավասությունից, բաց և քաղնում նրան*: Զալալյանի ուղղած «Պատուն մի պրոբլեմյան մնչ

* Հմմ. նաև Մ. Նալբանդ-անի «Հոգևոր Փարպեցու քղթի բարգմանության առաջաբանը, յեր. 11 և 8ետ. Տահագիզ. «Մ. Ղ. Նալբանդյան», Մոսկվա, 1897, յեր. 33 և հետ.

Մանրյանը գրում էր, թե Նազարյանցի չանքերով Նալբանդյանի պաշտպանությունն իր ձեռքն է առել Դելյանովը և համապատասխան կերպով ազդել նաև ճեմարանի հոգաբարձու Հովհ. Լազարևի վրա, վորը հայտնել է Ներսեսին, թե Նալբանդյանը ակար և մարմնով և դրանից անկախ՝ վորպես հոգևոր կոչումից արձակված՝ ազատ Սինոդի և կաթողիկոսի իրավասությունից։

Սինոդի արխիվում պահվել է, հիրավի, Հովհաննես Լազարևի փետրվարի 12-ին Ներսեսին ուղղած նամակը։ Լազարևը քննդրում է հայտնել իրեն Նալբանդյանի մեղքը և նրա դեմ յոգած մեղադրանքների հիմքերը, «վՈՐՔ իրավի վկայել յանցաւոր իցէ Նալբանդեանը, — գրում է Լազարևը,— արդարացիս ննջարկելի է նա ընդ պատժովք յուզդութիւն ինքեան. իսկ քէ ոչ՝ ըստ խոցի մատց ապօրէն է ոգորման ոէր, հալածել զնա ի Տփղիզ. և առիթ բամբասանաց վիճակի հոգևորական ազգի մերում։ Գրեցէք քննդրեմ Թիֆլիզոյ քաղաքական կառավարութեան, զի նա իւրմէ կողմանէ հաղորդեսցէ Մոսկովու քաղաքական կառավարութեան, և յանձնել զնալբանդեանն ի հաստատեալ պատասխանատուին ուր քննել զհանցանսն և զգործ նորին՝ քէ ճշմարտեսցէն ի վերա նորա յանցանք՝ յայնժամ անկանի նա ընդ պատժովք. իսկ եթէ ոչ, արդարդեսցի ոէր, այսու եղանակաւ ընդ ձեռն նորուն պայծառափայլութեան պահանջեալն զնա ի Թիֆլիզ մերով որդիական հաւատարմութեամբ հաւատամ սոսնձել զձեզ՝ համարի խոպան անպատշաճութիւն և անվայելչական կարգի ընթացից հոգևորական դասուդ Քեզնա՝ անհամաձայն օրինաց և ի վերայ վերոյիշեալ հրովարտակի Սինոդիս»։ Մանրի ունեցած տեղեկությունների համաձայն՝ Նալբանդյանին իսկ, քաղցնելով ընկճածին կանչվելու բուն պատճառը, համոզել էր Դելյանովին թե՝ հալածվում է հենց նրա պահի պատճառով, վորի քուրլովությունը ինքն էր իբր պլուկ հանել։ Մանրը հայտնում է, իբր թե Դելյանովը մեկոցների չար գիմել նուիրելուկ կոլեժսկի ռեգիստրատորի ատաքան ձեռք բերելու Նալբանդյանի համար, նպատակ ունենալով գրանով միանգամայն անխոցելի գարձնելու նրան։ «Ես, գայտոիկ լսելով առահկն,— ավելացնում է Մանրը,— առավել ևս համարձակութիւն առեալ ընկի ի քաղաքիս, և որ զգալի ևս ճանաչողաց գպատիվ և գանպատուութիւն համազգային՝ յանդգնագոյնս բարբառի գանձնէ՝ պարծելով և հրատարակելով ամենուրեք, թէ, ասացեալն իւր ներսէս չունի իրավունս և վոչ իսկ իշխանութիւն՝ կոչելու զինքն յատյան իւր. և թէ ոչինչ չէ նորա ծառայ, չէ ընդ իշխանութեամբ նորա և այլն։

* Սինոդի Գոնդ, 1852, № 12, թերթ 63 և հետ.

Ու. գձկնչ՝ որպէս և գմնծարու. ապա Ցարուքիւն Գաղուանան Ջալի-
պնանց՝ անհամեստ գողանչէ, գնրկուանող համարելով գիւր քչնա-
մին և այլնա։

Մանրի քաղած քաղքերի մնչ մեր ուշադրութիւնը գրավում է
յամբասանքներով լի մի այլ գրութիւն։ Ըստ յիշեալին գա
նրա այն նամակի անագրութիւնն է, վոր ուղղվել եր Գնչիանովին։
Այստեղ ասված է, վոր Նախիչևանից, Ղզմիածնից և Քիզլիզից բազ-
մաքիվ անգնկութիւններ են առաջվել Նալբանդեանի մասին,
վոր միտքերում հաստատում են նրա դեմ յնդած մեղադրանքները.
նա մասնակից և խորհրդակից է յեղել Ջալիբի դեմ կազմակերպ-
ված մահափորձի մնչ, նախատական նամակներ է գրել կաթողի-
կոսի դեմ, կաշառք առացել շատերից այս կամ այն գործը գլուխ
բերելու համար. պատճառ յեղել կաթողիկոսի և քեմանկեչի, ինչ-
պես նաև անբոանների և ժողովրդի մնչ ծագած խռովութիւն-
ներին. խուսափելով կաթողիկոսի հրամաններից փախել և անից առել,
գատաքից քաղաք և փոփոխել ընդ ամին իր ազգանունը. քաղցնելով
իր այս հանցանքները, նա ջանք և գործ գնում իր ճարտասանու-
թիւնով համոզացնել՝ քե Ղզմիածին կանչվելու պատճառը ճշմար-
տութիւն է և այլն։ Ցնքե Նալբանդեանը պահվի Մոսկվայում մեծ
ամաչ և քե Գնչիանովի, քե Լազարևների և քե ճեմարանի համար։
Գատուհաս մեռչը կարող և միայն պատճառ գտնող մեծամեծ խոս-
վութիւններին, վոր ծպիտի ծագնե և պատճառս անընդոյղ շատախո-
սութիւանց, քամնանց և խռովարարութիւանց նորա, վորպէս արդէն
խոկ սկսան երևիլ նշանքներ,— գրում եր Մաերը։

Ներսեսը խորամանկ վերաբերվել եր Լազարևից ստացած նամակի
առիթով։ Այդ մասին և վկայում Լազարևին ուղղած նրա 1854 թ.
սեպտեմբերի 5-ին Քիզլիզից ուղարկած կոնդակը։ Ըստ կոնդակի՝ Լա-
զարևը իբր թե համարել եր կաթողիկոսին ոտնձանքի պարտաւո-
րութիւանց ամենից իւրում կոչմանց, հալածիչ, անբարեչտ, անիրաւ,
ազէտ օրինաց և կանոնաց հաստատուչց իւրում եկեղեցական իշխա-
նութիւանցն։ Կոնդակը վերջանում է այս խոսքերով. «Քանզի ոչնչով
գձեր գերազանցութիւնն՝ ոչ լինել անհնաւ ձեր ընդ մեզ վարդնչական
հայրենական սուրբ սիրոյն և ոչ արժանաւոր ձերում գերազանցու-
թիւանն ճանաչել գհոգևնական գեղեկութեանն ընդհանուր հայոց
ընդ մեզ վիճակաւորի Նոր Նախիջևանայ և Բեսարաբիոյ սրբազան
Մատթէոս եպիսկոպոսի՝ ձեզ քաջածանօթ, և ձեռք գործառնել
անծանօթին պարտաւորութիւանց իւրում կոչմանց՝ անհնամատակա-
րութիւն եկեղեցւոյ հայրենեաց և կանոնաց եկեղեցականաց, և ամե-
նևին անարժան համարիլ վասն Միքայէլ Նալբանդեանց անզգա-
մուլ գպրի յանձնեցելոյ գատաստութիւանց կայսերահրամանաւ տեսնել

Սինոդի Էջմիածնի պարտաւորել գմնզ խնդրել զգներազօր հովանաւորութիւն իւրոյ կայսերական մեծութենան առ պաշտպանութիւն մերում կաթոլիկոսական և պատրիարգական արժանաւորութենանց, զոր ոչ ընաւ ներկից ինձ իմով անհոգութենամբ քոզուլ ընդ ոտիւք Մաաքէոս եպիսկոպոսի և հարազատի նորա Միքայէլ ազգասեաց գպրի՝ որ ի վեց ամաց հետէ զասանի հանդիսաւոր իւրումն հանգըստութենանց օժանդակութեամբ յանձնարարել զինն գնա պաշտպանութենանց ձերում գերազանցութենան, զոր եթէ արդէս պաշտպանեալ լոտ այսմ ձերում գրութենան՝ ունկնգիք պաշտպանել գարձեալ, և ոչ բարեհաճեցիք համաձայն խոստմանցն ձերոց վասն առաքելոյ գնա ի Միպիր՝ առաքել գնա ի Սինոդն Էջմիածնի*,

Ներսեսի այս կոնդակը ցուցց և տալիս, թե վորքան խորն եր Ներսեսի քշնամանքը գեպի Վեհապետյանն ու նրա գինակիցը՝ Նալբանդյանը։ Սուր իրավունքները պաշտպանելու համար կաթողիկոսը սպառնում եր գիմել ուղղակի Նիկոլայ I-ին, յերբ Հազարբեկը հետ չկենար իր գրաված գիրքից և գլուխ չբերի յերբ միչ այն խոստումը, վոր ինչպես յերևում է, յերբեմն տված և յեղել կաթողիկոսին — Միրիր քշելու Նալբանդյանին — այլ գեթ այն խնդիրը, վորով գիմում է նրան կաթողիկոսը, այսինքն՝ վոտախանութեան հակոդութեան տակ Մոսկվայից Էջմիածին ուղարկելու տազնապալի գպրին։ Ուշադրութեան արժանի է նաև Ներսեսի՝ Մանրին գրած մի նամակից։ Ջ. Մանրյանը հավատացնում եր հետազոտում, թե Նալբանդյանը տպիսի մարդասիրական գատի յենթարկվելը, յերբե չհասներ կաթողիկոսի մահը**։ Մեր ձեռքի տակ չկան առայժմ այս պնդումը հաստատող նյութեր։ Սակայն պետք է նկատենք, վոր Հազարբեկները շարունակում եյին պաշտպանութեան ցուցց տալ Նալբանդյանին, քեկուզ և մեղմում եյին այդ պաշտպանութիւնը՝ հետացնելով արան իրենց հակոդութիւնը յենթական ճնշումներից։ Ներսեսից առավել Հազարբեկների վրա պետք է վոր ազդեր, հարկավ, ազգային-կղերական գատի գործ գրած ճնշումը։ Ինչպես պատմում է Զալեսյանին գրած իր նամակում Մանրը, Մոսկվայի ազդեցիկ հայերը հասկացնել եյին տալիս Ներսեսին, թե վորքան անհարմար է և վտանգավոր՝ պաշտպանել կաթողիկոսի գեմ նրա անենչան տորտոզրյալին։ Ետ յերևույթին այս պատճառով եր հենց, վոր

* Էջմիածնի կաթ. արխիվ, Սինոդի ֆոնդ. 1852, Дело по распр. отд. № 12, лист 66.

** «Փարոս Հայաստանեաց», 1881, № 2, յեր. 14.

Լազարևներըը նպատակահարմար գտան՝ հետու պահել Նալբանդյանին ճեմարանից։ Փաստ է, որ տակավին 1854 թվի սկզբին տեղի ունեցած ձերբակալությունից հետո Նալբանդյանն իր ստանձնած պաշտոնի մեջ չեր այլևս։ Զալեսյանին ուղղած մի նամակում Մահերը գրում եր այդ առիթով՝ «Այժմ Նալբանդեանն անգործ և անեղաշատն և գնահի ի միում ի տանց ճեմարանին՝ ստանալով ամսական ռուբլու չափրուտա անձին, թէև ինքն ևս ունի ասանց հարստութիւն գրամոց՝ առաւել քան զ... հազար արծաթ ռուբլեացս»։

Նալբանդյանի հետաքրքրությանը մասին արվող այս ակնարկը բնորոշ գրպարտությունն է, որ արվում եր քիմիական քարտուղարի վրա ամեն ձևերու մատնություններ... Միաժամանակ շարունակվում եր քաղաքական հալածանքը։ Վորոնցովի դիմումով Տպագրության քաղաքականության կոմիտեն պահանջում եր նորից՝ ձերբակալել և կռվկաս ուղարկել Նալբանդյանին։ Մոսկվայի վոստիկանապետությունը շարունակ հակդեմ եր պահում գրանը։ 1853 թ. մարտին վոստիկանապետը փորձել եր կատարել Տպագրության խնդիրը, բայց հանդիպել եր Լազարևների դիմադրությանը։ Ճեմարանի վարչության մի գրություններից տեղեկանում ենք, միաժամանակ, որ Նալբանդյանը փաստորեն հեռացված եր դասատվություններից Լազարևի համաձայնությամբ՝ ասելով դասքիակցությունից ազատ պահելու նկատառումով, թեև մինչև 1854 թ. սեպտեմբեր 11-ը ձեռագրերն շարունակում եր դասատու համարվել ու ռոճիկ ստանալ ճեմարանի վարչությունից*։

Պարզ է, որ միանգամայն դուր չեկին անցել Զալեսյանի Մահերի և ընկ. Լանգերը։ Լազարևների հովանավորությունը հետագայում ամենաանսպասելի ձևերով, որ երանք ժամանցությունն ցույց տվին ճեմարանից հեռացվածը Նալբանդյանին՝ ազատ ունկնդիր դրվելու Մոսկվայի համալսարանում... Քսան-հինգ տարի անց, յերբ ակադ. լույս տեսնել էֆտսախափյլդ-ը Արիստարխ Լազարևը գրքում եր, որ ժամանակին ինքը և իր յեղբայրը հավանաբար եչեռատկարդ Նալբանդյանին։ 1858 թվի վերջերին Քաշտուտը Լազարևը Ներսեսի ասիրեցիներից մեկին, ք. Սոգոմոն Տեր Ղուկասյանցին** ուղղած մի նամակում էֆյուսխափյլդ-ը խմբագրող Նազարյանցի և նրա գլխավոր աշխատակցի — Նալբանդյանի մասին գրում եր այսպիսի տողեր. „Г. Назарьянц ученъ, но неблагоразумен, трудолюбив, но упорен и строптив. Вместо того, чтобы с пользою сеять свои знания, он возро-

* Моск. Обл. Архив, վերը նշած գործը։

** Տեր Ղուկասյանի մասին տես. Ա. Տերէկյանի «Պատմութիւն 75-ամյա գոյութեան Ներսիսեան Հայոց հոգևոր գպրոցի», Թիֆլիզ, 1888, յեր. 490 և հետ.

ждает распри, воспламеняет раздоры и ненависть. Вместо того, чтобы избрать себе достойных сотрудников: г. Мсера, г. Эмина и других, г. Назарьянц, пригласив в сообщники вредного Налбандова, которого патриарх Нерсес через наместника, князя Воронцова, и через министерство требовал переслать через полицию в Тифлис и Эчмиадзин к суду, и которого мы с покойным братом избавили и защитили по ошибке, по убедительным просьбам и письмам архиерея Матфея".

Կարծում ենք այլևս պարզ է „Ну хорошо!" վոտանավորի կապը վերը նկարագրած դեպքերի և գիմքերի հետ։ Վոտանավորը նկարագրում է Մ. Նալբանդյանի վոտիկանական փնտռումի հետ կապված քնորոշ մի նկիզոդ։ Հրահանգ առանալով գոնել և ձերբակալել Մոսկվայում քաղվող հայ ազգասեր Նալբանդյանին՝ վոտիկանատան պետները գիմել էին հայոց յեկեղեցին և հարցում արել ազգային-ի մասին գեկավարող քահանային։ Վերջինս, Նալբանդյանի համաքաղաքացին և նրա անձնական բարեկամը, խուսափողական պատասխան էր տվել և նախազգուշացնելով Նալբանդյանին, պատսպարել նրան իր տանը։ Վոտիկանությունը գիմում է այնուհետև Ցեկուլովին, վոր յեկեղեցու դռնապահ էր և ճեմարանի տեսակ մշտամատակ։ Նալբանդյանը ապրում էր ճեմարանի շենքում և, ինչպես շեշտում էր Մոսկվայի քաղաքապետը՝ առանց անցագրի — „без всякого письменного вида" — և առանց ցուցակագրված լինելու վոտիկանատանը։ Ճեմարանի տեսակը պատասխանատու էր այս զանցառության գիմաց, ուստի և շահագրգռված՝ վոտիկանության առաջ հայտ բերելու կենվորի ուր լինելը։ Սակայն Ցեկուլովի վրա ազդում էր նաև Նալբանդյանին հակառակորդ քանակի կազմակերպած հատարակական կարծիքը։ Մահվի օրագրություններին մեջ 1856 թ. հունվարի 14-ի ներքո կարդում ենք գարձյալ. «Առ Ս. վ. Զալալեանց, ի նոր Նախիջևան. Գատասխանի գրութեան ի 23-էն գեկտեմբերի անցեալ ամի։ Գրեցի վասն Նալբանդեանին, զի գրեաց առ Ցեկուլեաչ։ Փետրվարի 25-ին Մահվը գրում է. «Առ Ս. վ. Զալալյանց. ի յՈղեստաս կամ ի Գիշնև։ Գատասխանի գրութեանցն ի 5-էն ամսոյս։ Մանուշակ գեսիլն մեր քնդ հոգարարձուին գկարևորացն... Եւ ի սմին եղեալ զգիրն Ցեկուլովի, խնդրեցաք ծանուցանել զառացմանէն։ Գրելուց հետո, չգիտենք ինչու, Մահվը ընդել էր գբչով վերջին նախազատությունը։ Գարզ է, համենայն գեպս, վոր արգեն վորոշ կապ էր առեգծվել Զալալյանի և Ցեկուլովի միջև։ Այդ մասին և

վկայում նաև „Ну хорошо!"-ն, որտեղ վերջինիս քերնում դրված է ածականը „опытной" վարպետների մասին։

Ենկուլովի խորհրդանշական դեմքը Նալբանդյանին հիշեցնում էր յուրաքանչյուր հոտոտող հնարավոր մի այլ յերեցփոխ-պաշտոնյայի, մասիրովի, մուշքեր Ենկուլովը, անշուշտ միլիոնատեր չէր, ինչպես նրա ն. նախիջևանի կոլեգան, բայց ուներ էիշտ նրա հասկացողությունը յնկերցության և մեծատուններին փոխհարաբերության մասին, և արհամարում էր անշուշտ 1848 թվից հետո ջնջանելների հնարած „республика"-ն՝ համոզված էև

„Республика ведь у нас
существует официально".

Միայն Ենկուլովը վնասակար ազատականների յերկյուղած ծառան էր, տերոց հարաբերությունների և տերոց կարգերի նեցուկն ու պահապանը։ Մանրի չափ նա ևս ղգացել էր „молодой человек"-ի — Նալբանդյանի — ճամարտասանության զորությունը, ընդա ածելու պես կարողը լեզվի հարվածները։ Սակայն, Նալբանդյանի գրածից դատելով՝ Ենկուլովը զուրկ էր մյուս հակառակորդների համաոությունից։ Նա ափսոսում էր, որ նա, որ նա, որ „молодой человек"-ը դադարել է լավ վարվել իրա հետ... Հակառակ դեպքում Նալբանդյանի վեցը ավելու չեր ազայի մոտ Կոնակ տալով ազային կարող էլին յերկյուղ չկրել վոչ վոքից։

